

## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

1. *ԱՄՆ-ի Էրի լճի շրջակայքը հանգստի գոտի էր, բայց մոծակների առատությունը հնարավորություն չէր տալիս հարմարավետ հանգստի կազմակերպման համար: Մոծակների դեմ պայքարում օգտագործվեց ԴԴՏ թունաքիմիկատը: Մի քանի տարվա ընթացքում մոծակները վերացան, բայց դրանց հետ ապրիճանաբար անհետացան նաև ջրլող թռչունները: Լճի ջուրը սկսեց նեխել և անդուր հոտ արձակել: Հանգստի գոտին դադարեց գործելուց:*

*Ինչ էր կատարվել: Պարզվում է՝ մոծակների թրթուրները սնվելով հատակի բուսական մնացորդներով կանխում են դրանց նեխումը, միաժամանակ թրթուրներով սնվում են լճում բնակվող ձկները, որոնցով էլ կերակրվում են թռչունները: Պարզվեց, որ այս վնասակար համարվող միջատը մի ամբողջ էկոհամակարգի դինամիկ հավասարակշռության փաստացի բաղադրիչն է:*

2. *Տասնամյակներ առաջ Սևանա լճի մակարդակի իջեցման հետևանքով լճի ծանծաղ մասերում արագորեն սկսեցին զարգանալ ջրիմուռները: Այս երևույթը կանխելու նպատակով Լադոգա լճից ներմուծվեց Սիգ ձուկը, որը սնվում էր այդ ջրիմուռներով: Ընտելանալով լճի կենսապայմաններին Սիգը արագ սկսեց բազմանալ և վտանգել լճի էնդեմիկ ձկնատեսակների գոյությանը: Այսօր Սևանա լճում բնակվող ձկնատեսակների մեջ գերակշռողը Սիգ ձուկն է: Այս երևույթը ցույց է տալիս, որ բնության «գործերին» միջամտելիս անհրաժեշտ է հաշվի առնել էկոհամակարգի ձևավորված հավասարակշռությունը:*